

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ
ԼԵԶՎՈՒՄ

Խոսքի պատկերավորությունը ոճաբանության մեջ գործածվում է ամենատարբեր իմաստներով: Պատկերավորությունն ընդհանուր առմամբ ընկալվում է որպես խոսքի արտահայտման կենդանի, անմիջական, ներազդող գեղեցկություն, պատկերների ինքնատիպ, ոչ սովորական նկարագրություն՝ առանց որի ասելիքը դառնում է միագիծ ու անհետաքրքիր: Ոճաբանությունը պատկերավորությունն ուսումնասիրում է որպես խոսքի առանձնահատուկ ոճական արտահայտություն, որն իր դրսեւորումն է գտնում գեղարվեստական, նաև հրապարակախոսական ժանրերում: Խոսքի պատկերավորությունն իր նեղ իմաստով վերաբերում է բառերի փոխաբերական իմաստին: Այս դեպքում տվյալ հասկացությունը կորցնում է իր անվանողական (նոմինատիվ) արժեքը՝ ձեռք բերելով ակնհայտ ներազդող դեր և նշանակություն: Պատկերավորման ամենատարբեր միջոցների օգտագործման նպատակը, ասելիքին գեղագիտական, գեղարվեստական բնույթ հաղորդելն է:

Քանի որ սպորտային լեզուն ընթերցողի (հանդիսատեսի) վրա ներգործելու ամմիջական ֆունկցիա ունի, հետևապես և հաճախակի են պատկերավորման միջոցները*: Կարող ենք ասել, որ խոսքի ազդեցության ուժն անմիջականորեն կախված է արտահայտչական միջոցների կիրառումից: Դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ այլաբերություններ (tropes) և շարահյուսական բանդարձումներ (figures of speech): Առաջին խումբը՝ այլաբերությունները, բառեր են կամ բառակապակցություններ, որոնք օգտագործվում են փոխաբերական իմաստով՝ նպատակ ունենալով ստեղծել պատկերավորություն: Երկրորդ խումբն իրենից ներկայացնում է շարահյուսական կառույցների արտահայտություն: Սպորտային ժուռնալիստիկայում պատկերավորման միջոցները հստակ ոճաբանական դեր ունեն, դրանք ընթերցողի վրա ներազդելու վճռական միջոցներ կարելի է համարել, որ խոսքը դարձնում են պատկերավոր ու նաև հետաքրքիր:

«After Everton had realized his solo against the three players of the opposite team when he made the foul shoot, everything seemed to come to an end. That night Bavaria looked not so good as for previous two weeks when Bayern defeated the Dortmund players for a score 4:1. But for three minutes before the match when everybody thought it was over, suddenly invisible powers drove the guests forward and within 100 seconds Felix Magath's alumni turned everything up to down, in direct and indirect meaning. After scoring a goal by a leg shoot the guests disappointed set that part of the

body to work by which they usually think. The result is two goals by head shoots made by Luis and Makay. They stole the victory from Borussia».

«What ! What happened! " When the match is going to be over we must act with all power, but on the contrary everything was in vain" says the coach Bert Van Marvayk. But his Munich colleague's face was shining with happiness "After the break we played a polite football and at the last minutes we were simply super"». (UEFA direct, 05.01, pg 21).

Բերված հատվածում խոսվում է „Բավարիայի“ հաղթանակների մասին, վերջին հարյուր վայրկյանի ընթացքում նրանք խփել են երկու գնդակ և „Բորուսիայից“ կորզել հաղթանակը: Մարգչի խոսքը և՛ հոգեբանական առումով, և՛ պատկերավորությամբ լավագույնս բնորոշում է ստեղծված կացությունը: Պարտվող թիմը հարկ է, որ „գործադրի վերջին ճիգերը“, հակառակ դեպքում „աշխատանքը լցվում է ջուրը“, իսկ հաղթողներն համոզված են, որ իրենք որևէ կոպտություն, արգելված հմարք թույլ չեն տվել և խաղացել են „կոռեկտ ֆուտբոլ“, ուստի և պատահական չէ, որ խաղավերջում „իրենք պարզապես անկասելի էին“:

Մեջբերումը հագեցած է պատկերավորման միջոցներով, բայց դրանք այնքան սահուն և բնական կերպով են ներհյուսված խոսքին, որ չի զգացվում լրագրողի ճիգը՝ խոսքին հաղորդելու պատկերավորությունը:

Այլաբերության տեսակները բավականին շատ են, սպորտային լրագրության մեջ: Հաճախակի հանդիպում ենք մակդիրների, փոխաբերության, համեմատության, փոխանունության, հեզմանքի, առանձին դեպքերում շրջասույթի: Հետազոտությունը ցույց է տալիս, որ սպորտային լեզվի մեջ ևս *մակդիրը* (epithet) բնութագրում է առարկան, երևույթը՝ դրա պատկերավորության, գեղագիտական տեսակետից¹, ինչպես օրինակ՝

«The coach was watching the game with an impatient look. His anxious hands raised the weight! (Sport Europe, N33/97 pg. 17).

Ինչպես պարզ երևում է բերված օրինակից *anxious* մակդիրն ուժեղացնում է խոսքի հուզաարտահայտչական երանգավորումը:

Սպորտային լեզվում ինչպես այլ գործառական ոճերում *համեմատությունը* (simile) ևս այլաբերության տարատեսակ է, որտեղ առարկան կամ երևույթն առավել պատկերավոր դարձնելու նպատակով նրա որևէ հատկանիշ կամ յուրահատկություն համադրվում է մեկ այլ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և համեմատաբար ավելի լայնորեն է բնութագրում համեմատվող երևույթը²:

* Ոճագիտության մեջ դրանք տարբեր կերպ են անվանվում: Մենք նախընտրում ենք „պատկերավորման միջոցներ“ անվանումը: Տես Լ. Եզեկյանի „Ոճագիտություն“, Ե., 2003, Պ. Պողոսյանի „խոսքի մշակույթի և ոճաբանության հիմունքներ“, Ե., 1990, Ա. Մարությանի „Հայոց լեզվի ոճագիտություն“, Ե., 2001, աշխատությունները:

«The ball like an arrow flew to the goal»(FIFA magazine September 2004, pg. 48).

«And here is the stadium like a big bowl»(FIFA News April 2003, pg. 4). «As strict parents they were watching and following the sportsmen». (UEFA direct, 01.95, pg. 20).

Այլաբանության մի այլ տեսակ է *փոխաբերությունը* (metaphor), որը նույնպես խիստ բնորոշ է սպորտային լեզվին եւ հաճախ համարվում է կրճատված համեմատություն: Այստեղ բառի բուն նշանակությունը հակադրվում է բառի նոր, փոխաբերական իմաստին³: Սա տպավորիչ պատկերներ, հույզեր առաջացնող լավագույն միջոց է, որ հաճախ է գործածվում: Այն բացահայտում է այնպիսի հատկանիշներ, իրավիճակներ, գործողության տարբեր հանգամանքներ, որոնք նորովի են ներկայացնում ինչպես իրադրությունը, այնպես էլ երևույթները:

«The strong wind was blowing. The guards' hats were running all over the playground as if little wheels. The stadium shoots were thundering. Every five minutes the new runners were coming out from the start. And the lances were flying far and far away». (Champions, f. 1, 91, pg. 43).

Պետք է նշենք, որ ընդհանրապես փոխաբերության գործածությունը կախված է ամենատարբեր պայմանների հետ: Դրանք առանձնապես տեղին են և հետաքրքիր միայն այն ժամանակ, երբ կրում են լրագրողի անհատականության կնիքը, և նրա խոսքն էլ առանձնանում է անմիջական ու ոգևորիչ շեշտադրումներով: Ընդհանրապես դժվար է գտնել շատ քիչ ծավալուն մի հրապարակում, որտեղ չգործածվեն փոխաբերություններ՝ առանց դրա խոսքը դառնում է սխեմատիկ և պատկերավորության տեսակետից թույլ:

Սպորտային լեզվում հաճախ գործածվում է *շրջասույթը* (paraphrase): Վերջինս ոճական հնարք է. երբ ասելիքն ուղղակիորեն անվանելու փոխարեն տրվում է դրա նկարագրական բնութագիրը⁴: Այս պարագայում սովորաբար բոլորին հայտնի երևույթի նման մատուցումը խոսքը դարձնում է պատկերավոր, գունեղ եւ ազդեցիկ:

«Finally the queen of the sports as the light athletic is named with all its right, was certified to the disciplinary rights». (SporTime,N6, July1996, pg.23).

«The culmination of the celebration became the participation of the Soviet athletes, as they were nominated by the local press. The fatherland of the Olympic Games receives its guests with love and pleasure». (The Times, 1980, N150).

«The world number one football player was also participating in the opening of the games». (UEFA direct, 04.01, pg. 15).

Շրջասույթի օգնությամբ լրագրողը հասնում է որոշակի արտահայտչականության և սակավ բառերի օգնությամբ տեղեկատվությունն առավել տպավորիչ ներկայացնում:

Սպորտային լրագրության մեջ հաճախ է օգտագործվում մակ
անձնավորումը (personification): Այս դեպքում իրերին ու երևույթներին
վերագրվում են մարդկային հատկանիշներ:

«The Olympic Games came to birth in the wonderful past of
huminty»(ATHENS 2004, April 2000, pg.22). «All the stadium kept its breath and
thundered at last»(U.S. SOCCER Yearbook pg.31). «Atlanta. Of course he will
strengthen his muscles and will have the victory medal, it will never appear before the
difficulties». (Atlanta, Spring 1996, pg.15).

Եթե այլաբերությունների դեպքում առանձնակիորեն ընդգծվում է
բառերի փոխաբերական իմաստը, դրանց կիրառությունները, ապա լեզվի
արտահայտչական միջոցները շարահյուսական միավորներ են, որոնք խոսքին
հաղորդում են հստակ երանգավորում ու հուզականություն:

Դրանցից են ճարտասանական դարձույթները, կրկնության տարբեր
տեսակները, աստիճանավորումը, շրջադասությունը, ընդհատումը, գեղչումը և
այլն: Սպորտային լեզվին բնորոշ է հռետորական հարցը (rhetorical question),
որն ի տարբերություն սովորական հարցի, որոշակիորեն իր մեջ պարունակում է
և պատասխան⁵: Այն դրական, հաստատական իմաստ ունի և կարող է
երկրայական երանգավորում հաղորդել խոսքին: Այս դեպքում սովորաբար
շարադրանքը ձեռք է բերում նոր տոնայնություն՝ ընթերցողի միտքը սևեռելով
որևէ կարևոր հարցի վրա. «Who can say what the athlete feels who is taking part in the
competition for the first time and whom thousands of eyes are directed». (Sport Europe,
October 1999, N46 pg.17). «Can the stadium place the thousands of audience who are
crowded in the streets and squares?»(UEFA direct, 05.01, pg.32).

«How could that competition be if two years ago the fans hadn't received a
definite answer after the collision of the two competitors. The confusion had more and
more strengthened the fans' interest. The boxer had to meet again with the famous
wrestler». (Sport Europe, October 1999, N46 pg.29).

Հետտրական բացականչությունն (rhetorical exclamation) առավել
հաճախ հանդիպում ենք հեռուստաեթերում կամ ռադիոեթերում ուղղակի
ռեպորտաժների ընթացքում: Դրանք գործածվում են և սպորտային լրագրու-
թյան մեջ, այն գերազանցապես կապված է որևէ անհատի կամ հասարակության
ապրումների՝ հրճվանքի, զայրույթի, ուրախության, պահանջի, հիացմունքի
դրսևորման հետ. «Oh, my God! Could he excel me with his speed and run whispered
Gordon Pirry». (Sport in the UK, 2002).

«And here is the Olympic Games stadium. You get out of breath because of the
plenty of lights. How many have dreamed of today, how many hopes and
disappointments! How much of energy! How much power and will have been spent to
appear inside these walls». (Olympic Opening Ceremony-Sydney 2000, pg.5).

Ահա ինչպես է լրագրողի վերաբերմունքն արտահայտվում Սիդնեյի Օլիմպիադայի բացման հանդիսավոր արարողության կապակցությամբ.

«It was really wonderful! May some fragments of that celebration be spread throughout the world by wise journalists. May all the prep process went forward in such a level that it might not have an end. There is no doubt that the celebration was wonderful and it took place. The authors of the performance could simply protect the logic and completeness of their intention». (Olympic Opening Ceremony-Sydney 2000,pg.8)

Հռետորական դիմումը կարող է գործածվել և այն ժամանակ, երբ խոսքն ուղղված է անցյալին առանձին մարդկանց, որևէ ժամանակի և այլն: Խոսքի ձևավորման ոճական այս միջոցն ասելիքը հարաբերակցում է անցյալին, խոսքը զգալիորեն հարստանում է հուզական տոնայնությամբ ու ձեռք է բերում ներգործող ուժ. «Town of ancient Gods! You have preserved the legend times dust on your wall. Show your good will to those who are just with stable will». (Olympics News, August 2004, pg. 15). «Olympic Flame! The most mighty people have deigned you. Their hearts have oscillated because of your epiglottis and your temperature has been taken with them forever». (The Flame, January 1998, pg.2).

Ակնհայտ է, որ լրագրողն այս պարագայում խոսքը չի մասնավորեցնում որևէ Օլիմպիական խաղերի բացման արարողության հետ, մաճարտասանական դիմումով հասնում է ավելի մեծ ընդհանրացման. ամեն մի մարզիկ, երբ կանգնում է Օլիմպիական աստվածների երկրից բերված կրակի առջև, իրեն զգում է որպես ժառանգորդը մի մեծ ժամանակի, որն իր մեջ է ներառում մահ նրանց, ովքեր գալու են իրենից հետո: Մարզիկի համար բացառիկ այս զգացողությունը, առանձնակի հարգանք ու վերաբերմունք է ստեղծում մնացածների, այդ թվում մահ հակառակորդ թիմի ներկայացուցիչների հանդեպ:

Սպորտային լեզվին բնորոշ է նաև *կրկնությունը* (repetition), որը ևս ոճական, շարահյուսական դարձույթ է: Կրկնության նպատակը ընթերցողի ուշադրությունը որևէ երևույթի վրա կենտրոնացնելն է⁶: Կարող է կրկնվել և՛ բառը, և՛ բառակապակցությունը, և՛ նախադասությունը:

«We won, because psychologically we have been preparing well enough. We won because the opposite team had neither the same proficiency nor experience. We won because we were acting together at the moment than ever! At last we won because we were to». (Volley World 2000/1, pg.22).

Նախադասության կրկնությունը կարող է տարբեր պարբերությունների սկզբում ուշադրությունը կենտրոնացնել որևէ երևույթի վրա, իսկ ամբողջության մեջ յուրօրինակ տրամաբանական կապ ստեղծել նախորդ պարբերությունների միջև, ընդ որում՝ ամեն անգամ կրկնվող նախադասությանը հաջորդում է ապրումների ու հույզերի մի նոր ակիբ, որ խոսքը դարձնում է արտահայտիչ ու ներազդող:

Հաճախ կարող ենք հանդիպել բառերի ու շաղկապների կրկնության դեպքերի: Այստեղ շեշտվում է յուրաքանչյուր բառային միավորի ինքնուրույն նշանակությունը: Այս երևույթի հետ անմիջականորեն կապված է ոճական մեկ այլ հնարք՝ *աստիճանավորումը* (gradation), որի դեպքում յուրաքանչյուր հաջորդ լեզվական միավոր ուժեղացնում է (աժելի հազվադեպ թուլացնում) նախորդի իմաստը, եւ որի շնորհիվ ստեղծվում է խոսքի էմոցիոնալ լարվածություն: Նման նշանակություն ունեցող բառերի կրկնման հետևանքով իմաստը կարող է ուժեղանալ կամ թուլանալ, հետևապես, սպորտային լեզվում հանդիպում ենք և՛ բարձրացող, և՛ իջնող աստիճանավորման:

«But Mikol! Mikol!

What did we know about this young athlete before the start of the Olympic Games? And how much we knew after 44.6 seconds. It turned out he was never afraid of Kwantoren. He can excel the Belgian athlete, he can excel the strongest English athlete, he can never fail reaching the finish, he can laugh and he can devote that laughter to us». (Olympic News, October 1996, pg. 14).

Բավականին հաճախ են նաև *շրջադասության* (inversion) դեպքերը, երբ նախադասության մեջ բառերը կարող են իրենց „ընդունված“ տեղում չլինել: Այս պատճառով էլ տեղը փոխած բառը կարող է իր վրա ուշադրություն հրավիրել. «Their faces are calm, eyes bright, nothing told about cordial emotion, about sport malicious. He was running fast, excelled lightly like a plane, looked with his eyes black and symbolic». (SporTVision, N121/February 1998, pg. 25).

Սպորտային ռեպորտաժներում հանդիպում ենք դեպքերի, երբ իրադարձությունների նկարագրության ընթացքում հեղինակը միտումնավոր բաց է թողնում առանձին բառեր, որոնք կոհառում է ընթերցողը: Ոճական այս դարձույթն անվանում են *ընդհատում* (aposiopesis), այն նպաստում է խոսքի արտահայտչականության, հուզականության բարձրացմանը: Ընդհատումը ասույթի կամ նախադասության արտասանության հանկարծակի դադարեցումն է: Ընդհատումը, որի պատճառով մտքի շարունակությունը թերի է մնում, արդյունք է մեծ մասամբ զգացմունքների զեղման⁷:

«Hello... Irisha... I have already been awarded... I will call you again after the press conference. Did you watch the race?... I love you... Kiss Yura». (Sports, 1980, N8, pg. 17). «Our sportsmen reached Athenes. But...Many things were unexpected. The offered food brought much complain. We ought to be adapted...Disturbing and permanent doping tests...». (Champions, f. 2, 89, pg. 50).

Առաջին օրինակում մի կողմ „թողնված“ բառերը, կախման կետերը վկայում են, որ արդեն օլիմպիական մեդալը նվաճած մարզիկը չի կարող բառերով արտահայտել այն ամենը, ինչ տվյալ պահին կատարվում է իր հոգում, „Դու տեսա՞ր վազքը...“ արտահայտությունը ընթերցողի մեջ վերակենդանացնում է Բորզովի սրընթաց վազքը, որ նրան կանգնեցրեց Օլիմպիական

բարձունքի ամենաբարձր աստիճանին: Նրա խոսքը՝ ընդհատ նախադասություներով, արտահայտություններով ընթերցողին պարզապես հուշում են այն անկրկնելի, բացառիկ զգացողությունների մասին, որ ապրում է այդ պահին մարզիկը:

Սպորտային լեզվի մեջ երևույթների հուզական գնահատականի կարևոր միջոց է նաև *հեզոնալը* (irony): Այս դեպքում սովորաբար բացասական երևույթը ծաղրվում է ոչ ուղղակիորեն⁸: Առաջին հայացքից արված գովասանքն ի վերջո ստանում է հակառակ իմաստ: Դրական հատկանիշներ վերագրելով որևէ մեկին՝ հեղինակն ընդգծում է, որ այդ որակներն իրականում չկան: «In my opinion Komenezin is in a good state to play. He could block only one shoot, the others appeared in the net». (UEFA flash, 2000, April).

Քիչ չեն և հումորի դրսևորումները. այս դեպքում լրագրողի վերաբերմունքը երևույթների կամ տվյալ մարզիկի հանդեպ բարեկամական է, իսկ խոսքն ապրումների ելևէջներով ստեղծում է անմիջական, աշխույժ մթնոլորտ:

«When five laps had remained for the finish, Piri stopped breathing but not generally, of course, to Kuts nape. Gordon Piri stayed behind. Many began asking. Kuts seemed to think the race to be not 200m. but 2000m.». (SportTime, N6, July 1996, pg. 38).

Գեղարվեստական պատկերի կարեւոր տարրերից է *դիմանկարը*, որը գրական-իրապարակախոսական տարբեր ժանրերում ոճական յուրահատուկ երանգավորումներ է դրսևորում⁹: Դիմանկարը սովորաբար այս կամ այն անհատի՝ կերպարի արտաքին նկարագրությունն է, որի միջոցով էլ փորձ է արվում բացահայտելու նրա էությունը, վարքագիծը, անմիջականությունը¹⁰ և այլն: Սպորտային լեզվում հաճախակի են ներկայացվում դիմանկարներ, դրանք կարող են լինել շատ սեղմ և կամ ծավալուն: Կարևորն այնպիսի արտահայտչական միջոցների համադրությունն է, որ դիմանկարը դառնա տեսանելի և ամբողջական: Սիա թե ինչպես է հեղինակի կողմից ներկայացվում Ռուսաստանի նորընծա չեմպիոնը.

«Alexey Tischenko with oleander on his head, the Russian flag on his shoulders was sitting in the press conference hall as a young God and was looking attentively at the medal which he had just been praised and touched his lips from a moment to a moment and trying with his teeth. There is no doubt he has never tasted such a delicious thing for 20 years». (Sport Europe N29/96, pg. 11).

Այստեղ լրագրողը ստեղծել է երիտասարդ մարզիկի հմայիչ, գրեթե երեխայական անմիջականություն դրսևորող դիմանկարը. նրան չեն հետաքրքրում շրջապատի մարդիկ: Որքան ջանք, որքան ուժ ու էներգիա է ծախսվել այս փոքր ու փայլուն „իրը“ ձեռք բերելու համար, և ինչպես երեխան ամեն փայլուն իր բերանն է տանում, նույնը կատարում է և աշխարհի չեմպիոնը: Այսպես ամբողջական է դառնում դիմանկարը՝ առաջին պատկերը՝ պետական դրոշմը թիկունքին, իսկ վերջում՝ պետության հիմնը երգելիս: Մարզիկն առաջին

հերթին իր երկրի վարկը պաշտպանողն է, ապա մոր միայն պարզ ու անմիջական, երեխայի պես զարմացող ու սեփական հրճվածքն արտահայտող մարդ:

Ահա և մեկ այլ դիմանկարի օրինակ. «But the Brazilian Oliveira? He was packing his things, he three times increased his achievement centimeter by centimeter. Yes he had achieved only high results before the Olympic Games and he wished so much to overcome the area and the time!». (The Times, 1980, N150).

Այս օրինակում շատ սեղմ բնութագրումներով աստիճանաբար ամբողջանում է մեծ մարզիկի մարդկային դիմանկարը. նրա ջերմ, առինքնող բնավորությունը հուզում է մարզիկին վայել կեցվածքով, կամեցողությամբ: Այսուհանդերձ դիմանկարը միայն արտաքին, ակնհայտ գծերով չի ամբողջանում: Ավելի կարևոր է էությունը, որը դրամատիզմի որոշակի երանգներ է ավելացնում այս կերպարին: Ամեն ինչ կարելի է հաղթահարել, կարելի է դառնալ աշխարհի թիվ մեկ մարզիկը, բայց ամենամարտիկ հաղթահարել ժամանակը, զալու է մի պահ, երբ ավելի երիտասարդ և ուժեղ մեկ այլ ամհատականություն ինքնահաստատման մղումով կհասնի բարձունքին, և դու ստիպված կլինես զիջել քո տեղը: Սա անխուսափելի է, և ամենահզորն անգամ խոնարհվելու է ժամանակի առջև: Եվ այն պահին, երբ հարկ է թողնել ասպարեզը, դա պետք է անել ասպետական կեցվածքով, ինչպես որ ուներ մեծ բրազիլացին՝ Օլիվեյրան:

Այսպիսով բերված օրինակները վկայում են, որ սպորտային լրագրողները դրսևորում են երևույթների մեջ թափանցելու մեծ հմտություն: Սպորտային լեզվում խոսքի արտահայտչական ամենատարբեր միջոցների (այլաբերություն եւ շարահյուսական բանդարձումներ) գործադրման միջոցով լրագրային հրապարակումները դառնում են պատկերավոր, հետևաբար նաև տպավորիչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. И. Арнольд, Стилистика современного английского языка, М., 1990, с. 88.
2. Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Ե., 2000, էջ 131:
3. И.Р. Гальперин, Очерки по стилистике английского языка, М., 1958, с. 125.
4. Краткий словарь литературоведческих терминов, М., 1978, с. 117-118, նաև И. Гальперин, նշված աշխատությունը, էջ 158-159:
5. И. Гальперин, նշված աշխատությունը, էջ 215-217:
6. Ա. Սարոբյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2001, էջ 169:
7. Էդ. Ջրբաշյան, Գրախոսության տեսություն, Ե., 1980, էջ 252:
8. Էդ. Ջրբաշյանի նշված աշխատությունը, էջ 240:
9. Լ. Եզեկյան „Ոճագիտություն“, Ե., 2003, էջ 369:
10. Լ. Եզեկյան „Ոճագիտություն“, Ե., 2003, էջ 370:
11. И. Б. Голуб, Стилистика русского языка, М., 1999, с. 130: